# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ԻՆՉ ԱՆԵԼ գիտագործնական սեմինարների շարքի ս.թ. մարտին նախատեսվող *ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ* թեմայով հաջորդ փուլի համար հայտարարում է մրցույթ: Հաղթած աշխատության հեղինակը կստանա **200,000 հզ դրամ**, իսկ երկրորդ լավագույն արդյունքը հաղթած աշխատանքի հետ մեկտեղ կտպագրվի ՀԱԳՄ և Անտարես հրատարակչության կողմից հրապարակվող հերթական ժողովածուում:

## ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

### ԹԵՄԱ: Կապիտալի շուկայի զարգացումը ՀՀ-ում՝ պահանջարկի գործոններ

#### 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ-ում կապիտալի շուկայն, ի տարբերություն բանկային շուկայի, չունի զարգացվածության այն աստիճանը, որ հնարավորություն ընձեռի առանց ֆինանսական միջնորդների էական գումարներ ներգրավել իրական հատված, դրանով էապես մեծացնելով ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը՝ հատկապես միջին ձեռնարկությունների համար: Շուկայի թերզարգացվածության պատճառով (օրինակ, արտահայտված ցուցակված ընկերությունների սակավությամբ) նաև նվազում է ՀՀ տնտեսության մրցակցային միջավայրի գնահատականը:

#### 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ավելի հասցեական և թիրախային դարձնել շուկայի աճին նպաստող մակրոպրուդենցիալ իրավակարգավորումները և հարկաբյուջետային քաղաքականությունը:

#### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է գնահատել՝

1) Կապիտալի շուկա գումարներ ներգրավելու մակրոպրուդենցիալ և իրավական այլ կարգավորումները, և
2) Հարկային քաղաքականությամբ այդ գումարների հավասարաչափ և արդարացի դիտարկումը՝ նմանատիպ այլ ֆինանսական գործունեության համեմատ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## Ակնկալվող արդյունքը

### Առաջադրանք 1. Մակրոպրուդենցիալ կարգավորում

Պետք է գնահատել, արդյոք ներդրողների և նրանց գումարների նկատմամբ պահանջների տեսակետից ՀՀ-ում առկա կարգավորումները տրամաբանորեն համադրելի են՝

1) Բանկային, ապահովագրական, վարկային կազմակերպությունների հետ ՀՀ-ում;
2) Միջազգային լավագույն փորձի հետ այդ թվում հատկապես ուշադրություն դարձնելով այն երկրների վրա որոնք ունեցել են ըստ էության բացակայող կապիտալի շուկայի կայացման և խրախուսման խնդիր։

### Առաջադրանք 2. Հարկաբյուջետային կարգավորում

Պետք է գնահատել, արդյոք ներդրողների և նրանց գումարների նկատմամբ պահանջների տեսակետից ՀՀ-ում առկա կարգավորումները տրամաբանորեն համադրելի են՝

1) Ֆինանսական շուկայի այլ հատվածների հետ (օրինակ՝ կենսաթոշակային ֆոնդերում փայերի, բանկային ավանդների և այլն) ՀՀ-ում;
2) Միջազգային լավագույն փորձի հետ, այդ թվում հատկապես ուշադրություն դարձնելով այն երկրների վրա որոնք ունեցել են ըստ էության բացակայող կապիտալի շուկայի կայացման և խրախուսման խնդիր։

## 4. ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկալի է որ հետազոտությունը պարունակի ոչ միայն ակադեմիական գրականության ամփոփում, օրենսդրության և երկրորդային տվյալների վերլուծություն, այլ և պարունակի գործարարների հետ շփման արդյունքում ձևավորված հարցադրումներ։ ՀԱԳՄ-ն կարող է աջակցել հանդիպումների կազմակերպման առումով։ Հետազոտության տևողությունը 1 ամիս է։

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## 5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Ովքեր կարող են դիմել

Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս կամ գիտաշխատող:

### Հաղթողի ընտրությունը

Մրցույթի հաղթողն ընտրվում է ՀԱԳՄ և համագործակցող գիտնականների կողմից կազմակերպվող մրցակցային գործընթացի միջոցով: